

# ԱՐԵՏԱԳԵՐ




Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

25 Նոյեմբեր 2018

ԺԷ. Տարի

Թիւ 48

## Բ. ԿԻՐԱԿԻ ՅԻՍՈՆԱԿԱՑ



### ԺԱՄԱԾՈՒՏ

Միաժին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ եռթեամբ, որ յանձն առիր մարմ-նանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածիննեն, անփոփոխելիո՛ մարդ դառնալով խաչուեցար, Զրիստոս Աստուած եւ մահովո՛ մահը խորտակեցիր. Մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յոգևոյն հետ փրկէ՛ մեզ:

### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Որ անբաւ յաղթական զօրութեամբ Թագաւոր ես Երկնքի ու Երկրի, Զրիստոս Աստուած, կ'օրինաբանենք քեզ:

Որ Յօր փառակից ըլլալով՝ օրինուած ես անմահներեն եւ խոնարհելով մարմին առիր, Զրիստոս Աստուած, կ'օրինաբանենք քեզ:

Որ մեծ զօրութեամբ մահը ոտնակոյն ըրիր եւ յարութիւն առնելով՝ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, անմահ եռթիւն, կ'օրինաբանենք քեզ:

## ՄԵՍԵԴԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)

Աստուա՛ծ իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելի եւ Երուսաղէմի մեջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանաս:

Աղօթքներս լսե՛, եւ ամեն մարմնաւոր Եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

## ԲՆԹԵՐՑՈՒԱԾ ԳՈՎԱՍԱՆՔԻ ՄԱՂԹԱՆՔԵՐ

**Պողոս առաքեալին Թեսադոսիկեցիներուն ուղղած Ա. թուղթը**

(1 Թես. 1, 1-10)

Պողոս, Սիլուանոս եւ Տիմոթեոս, Թեսադոսիկեցիներու Եկեղեցիին, որ հաղորդութեան մեջ է Յօր Աստուծոյ եւ մեր Տիրոց՝ Յիսուս Զրիստոսի: Զեզի՝ շնորհը եւ խաղաղութիւն: Միշտ շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ՝ ձեր՝ ամենուն համար, ձեր յիշատակն ընելով անդադար մեր աղօթքներուն մեջ: Կը յիշենք մեր Աստուծոյ եւ Յօր առջեւ, գործերը ձեր հաւատքին, վաստակը ձեր սիրոյն, յարատելութիւնը ձեր յոյսին, զոր կը պարտիք մեր Տիրոց՝ Յիսուս Զրիստոսի:

Գիտեք, Աստուծմտ սիրեցեալ եղայրնե՞ր, թէ դուք անոր ընտրեալներն եք: Որովհետեւ մեր Աւետարանը միայն խօսքով չերկայացուեցաւ ձեզի, այլ նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգիին ներգործութեամբ եւ առատութեամբ: Արդարեւ, դուք գիտեք, թէ ինչ վերաբերմունք ունե-

ցանք ձեր մեջ, ի սպաս ձեզի: Դուք սկսաք մեզի նմանիլ, մեզի եւ Տիրոց, ընդունելով խօսքը, բազմաթիւ նեղութիւններու մեջ, Սուրբ Հոգիին տրուած ուռախութեամբ, եւ այսպէս օրինակ հանդիսացաք Մակեդոնիայի եւ Աքայիոյ բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ, ձեր քովէն հնչեց Աստուծոյ խօսքը եւ ձեր հաւատքն առ Աստուած ծաւալեցաւ ո՛չ միայն Մակեդոնիա եւ Աքայիա, այլ՝ նաեւ բոլոր կողմերը, այսպէս որ ա՛լ կարիք չունինք այս մասին բան մը ըսելու: Կը պատմեն անոնք, թէ ինչպէս մենք ձեզի Եկանք եւ դուք ինչպէս Աստուծոյ դարձաք՝ լրելով կուրքերը, ծառայելու համար ապրող եւ ճշմարիտ Աստուծոյ, սպասելով անոր Որդիին, որ պիտի գայ Երկինքնեւն եւ որ ինք յարոյց մերելներէն, Յիսուս, որ մեզ կը փրկէ գալիք բարկութենեն:

**ԱԼԷԼՈՒԻԽ, ԱԼԷԼՈՒԻԽ,**

Աստուած հազիւ յայտնուի՝ իր բոլոր թշնամիներն ալ պիտի ցրուին, զինքը ատողները՝ ամենքն ալ իր առջեւեն պիտի փախչին:

(Սաղմոս 67, 2)

**ԱԼԷԼՈՒԻԽ:**

## ԱՐԵՏԱՐԱՎՆ ԱՆՄԻՏ ՀԱՐՈՒՏԱԾ

(Դուկ 12, 13-31)

Մեր Տեր Յիսուս Քրիստոսին՝ մեկը քազմութեան մէջէն ըսաւ. «Վարդապետ, զսէ եղբօրս, որ ժառանգութիւնը քամնուի հետո»: Յիսուս պատասխանեց. «Ո՞վ դրա զիս դատաւոր՝ ձեր վրայ կամ ձեր ինչքերը բաժնող»: Յետոյ աւելցուց. «Զգուշացք ամեն ընչաքաղութեան, որովհետեւ նոյնիսկ հարստութեան մէջ մարդուն կեանքը կախում չունի ինչքերէն»: Եւ այս առակը պատմեց անոնց. «Հարուստ մարդու մը կալւածները առատ բերք տուին. մարդը ինքնիրէն կը մտածեր. «Ի՞չ պիտի ընեմ, քանի որ բերքս ամբարելու տեղ չունիմ»: Յետոյ ինքնիրէն ըսաւ. «Գիտեմ թէ ինչ պիտի ընեմ. կը քանդեմ շտեմարաններս եւ աւելի մեծերը կը շինեմ եւ կ'ամբարեմ բոլոր ցորենն ու ինչքերս, ապա ես ինծի կ'ըսեմ. «Ահաւասիկ ամբարւած անսպառ պարեն ունիս երկար տարիներու համար. հանգստացիր, կե՛ր, խմե՛ եւ զուարճացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ անոր. «Անմի՛տ, այս գիշեր իսկ հոգի պիտի պահանջեն քեզմէ եւ ամբարածդ որո՞ւ պիտի մնայ»: Ահաւասիկ ինչ կը պատահի անոր, որ ինքնիրէն համար գանձեր կը հաւաքէ, փոխանակ հարցուտանալու Աստուծոյ առջեւ»:

Յետոյ Յիսուս ըսաւ իր աշակերտութուն. «Ասոր համար կ'ըսեմ ձեզի, մի՛

մտահոգուիք ձեր կեանքին համար, թէ ինչ պիտի ուտեք, ո՞չ ալ ձեր մարմինին համար, թէ ինչ պիտի հազնիք: Կեանքը աւելի կ'արժէ քան սկսւնքը Եւ մարմինը՝ աւելի քան հազուստը: Դիտեցեք ազռաւները, որոնք ո՞չ կը ցանեն, ո՞չ կը հնձեն, ո՞չ շտեմարան ունին եւ ո՞չ ալ մարան. սակայն Աստուած զանոնք կը կերակրէ. որքան աւելի ձեզ՝ որ թռչուններէն աւելի կ'արժեք: Ո՞վ ձեզմէ՝ հոգ ընելով կրնայ կանգուն մը աւելցնել իր հասակին վրայ: Եթէ ուրեմն այսքան փոքր բանի մէջ անկարող էք, ինչո՞ւ կը տագնապիք միւսներուն համար: Նայեցէք շուշանին. ո՞չ կը մանէ, ո՞չ ալ կը հիւսէ Եւ սակայն նոյնինքն Սողոմոն իր բոլոր պերճանքներուն մէջ անոնցմէ մէկուն պէս չհազար: Եթէ Աստուած դաշտերու վրայ այդպէս կը զգեստաւորէ խոտերը, որ այսօր կան Եւ վաղը կրակի մէջ կը նետուին, որքան աւելին պիտի ընէ ձեզի, թերահաւատնե՛ր: Ուրեմն դուք մի՛ փնտռեք թէ ինչ պիտի ուտեք կամ ինչ պիտի խմեք. մի՛ մտահոգուիք:

Որովհետեւ այս բոլորը աշխարհի հեթանոսները կը փնտռեն, իսկ ձեր երկնաւոր Հայրը գիտէ ձեր կարիքները: Դուք փնտռեցէք Աստուծոյ արքայութիւնը Եւ այդ ամենը աւելիով պիտի տրուի ձեզի»:

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

#### Բ. Յիսուսակաց

Յայ Եկեղեցւոյ Հայրերը այս օրուան աւետարանական ընթերցում ընտրած են Դուկասի այս հատուածը, ուր Յիսուս կը խօսի երկրաւոր բարիքներուն Եւ մարդուն երջանկութեան մասին:

Յիսուս կը խօսէր յօգուտ մարդկութեան հոգեւոր յառաջիմութեան Եւ բարգաւաճումին ու կը փորձէր զայս ձերբազատել նիւթին կապանքներէն Եւ բարձրացնել մարդը:

Յիսուսի պատասխանը ժառանգութեան հարցի մը մասին խիստ Եր ու վճռական: Ան կ'ուզէր փոխանցել այս զաղափարը, թէ գանձեր դիզենք ո՞չ միայն երկրի վրայ, այլ մանաւանդ՝ երկինքի մէջ, որովհետեւ Աստուծոյ համար կարեւոր չէ թէ որքան հարստութիւն ունինք, այլ՝ ինչ ենք Եւ ինչպիսին կ'ըլլանք մեր ինչքերով: Ով որ կ'ուզէ գանձ ունենալ՝ իր եսին համար կը

հաւաքե, իսկ ով որ իր Եռլթեան մեծ արժեք կու տայ, իր եսէն կը հրաժանի եւ կը մտածէ Աստուծոյ դիմաց իր Եռլթեան մասին: Մարդ կայ որ միշտ իր սրտով եւ հոգիով իր գանձին կապւած է, գանձի մասին կը մտածէ, գանձը կը հոգայ եւ գանձին վտանգներէն կը սոսկայ: Սակայն Եկեղեցւոյ Հայրերը մեզի կ'ուսուցանեն թէ՝ Աստած նոյնինքն յաւիտենական գանձ մըն է: Մենք որպես քրիստոնեաներ համոզուած պէտք է ըլլանք, որ Աստուծոյ համար անսահման հարստութիւնը սիրոյ պարգեւին մէջ կը կայանայ:

Աւետարանի այսօրուան պատգամին մէջ, կը տեսնենք որ Յիսուս չուզեր մեզ գրկել Երկրաւոր բարիքներէն, այլ կ'ուզէ որ այնպէս ինչպէս նիւթական հարստութիւն կը դիզենք, նոյնպէս ալ հոգեւոր հարստութիւն դիզելով՝ յաչս Աստուծոյ հարստանանք: Մեր միակ հոգը նիւթը թող չըլլայ, քանի որ օր մը վերջ պիտի գտնէ ամեն ինչ որ նիւթական է:

Մեր ապրած այս Երկրաւոր կեանքին ընթացքին բարի գործեր կատառնենք որքան կրնանք, որովհետեւ այդ գործերը մեզ կ'արդարացնեն մարդոց եւ Աստուծոյ առջեւ: Դրամը եւ նիւթը՝ փարթամ կեանքի, զուարճանքի ու մարմանական հաճոյքներու կ'առաջնորդեն. միևնէ հոգեւոր հարստութիւնը, ուղիշին բարիք ընելու եւ յաւիտենական կեանքի կ'առաջնորդե:

Այսօր, դժբախտաբար մարդը կը յեսու միա՛յն ինքնիր ուժերուն վրայ, վանելով իր մտքէն Ան, որ Տէրն է պատ-



մութեան, սկիզբն ու վախճանը կեանքի:

Դժբախտաբար հարստութեան սիսալ կուտակումն ու գործածութիւնը դասակարգային տարրերութիւններ կը պատճառէ ու հարազատներու միշեւ ատելութիւն կը ստեղծէ: Մարդ Երբ ստրուկն է նիւթականին, կը դառնայ պահանջկոտ. իինգ ունենալով կը ծգսի տասին, տասը գտնելով՝ հարիդին, զանոնք հազի ծեռք ծգած, կը դիմէ աւելի մեծ գումարի, յուսալով զանոնք կրկնապատկել: Մարդուն այս ընթացքը սիսալ է եւ զայն կ'առաջնորդէ յաւիտենական կորուստի:

Քրիստոնեային կեանքը Աստուծոյ փառքին համար պէտք է ըլլայ: Աստած ստեղծեց տիեզերքը որպեսզի մարդը վայելէ զայն եւ ո՛չ թէ անոր ստրուկը դառնայ: Երկոր գանձին կապուած սիրտը միշտ սրտաթողի մէջ է, իսկ Երկնքի գանձին կապուած սիրտը վախէ եւ կասկած ազատ կը մնայ, եւ Երջանկութիւն կը վայելէ: